ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ք.Սիսիան Գ. Նժդեհի 6

Հեռ. 2-32-20

Թիվ ԴԴ 31- 3156

29.11.2013թ.

ՀՀ Սյունիքի մարզպետարանին
ք. Կապան Նժդեհի 1

Կից ուղարկվում է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 29.11.2013 թվականի թիվ ՍԴ1/0212/02/13 քաղաքացիական գործով վճռի օրինակը:

Առդիր վճիռը 2 թերթ :

Դատավորի օգնական Հ. Հովհաննիսյան

9 P2 8190 2013թ.

ՍԴ1/0212/02/13

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

29.11.2013թ. ք. Սիսիան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը

Նախագահությամբ՝ դատավոր Իգնատ Բեգլարյան
քարտուղարությամբ՝ Սեդա Ավագյան

Դռնբաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Սյունիքի մարզի դատախազության (գրանցման վկայական 002347, ՀՎՀՀ 02506634, հասցեն քաղաք Կապան Մ.Ստեփանյան 2) ընդդեմ Բագրատ Վարդգեսի Միրզոյանի հայցվորի կողմում հանդես եկող երրորդ անձ ՀՀ Սյունիքի մարզպետարանի 102400 ՀՀ դրամի բռնագանձման պահանջի մասին

Պ Ա Ր Զ Ե Ց

I

Գործի դատավարական նախապատմությունը

28.10.2013 թվականին Սյունիքի մարզի դատախազությունը հայց է ներկայացրել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Բագրատ Վարդգեսի Միրզոյանի հայցվորի կողմում հանդես եկող երրորդ անձ ՀՀ Սյունիքի մարզպետարանի 102400 ՀՀ դրամի բռնագանձման պահանջի մասին:

28.10.2013 թվականին հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Ներկայացվել է միջնորդություն հայցի ապահովման միջոց կիրառելու մասին:

28.10.2013 թվականին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը մերժել է հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը:

Հայցադիմումին պատասխան և առարկություն պատասխանողի կողմից չի ներկայացվել:

Հայցվորի ներկայացուցչի դիրքորոշումը

Հայցվոր Սյունիքի մարզի դատախազության ներկայացուցիչ Հայկ Կարապետյանը 27.11.2013 թվականին գրություն է ներկայացրել դատարան նշելով, որ հրաժարվում է հայցից և խնդրել է քաղաքացիական գործի վարույթը կարճել:

II

Դատարանի իրավական վերլուծությունները

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական գործի վարույթը կարճվում է, եթե հայցվորը հրաժարվում է հայցից:

Պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված այն սահմանված չափով վճարված լինելու կապակցությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 6-րդ կետով և 130-132-րդ հոդվածներով, դատարանը

ՎՃՌԵՑ

Կարճել քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի Սյունիքի մարզի դատախազության ընդդեմ Բագրատ Վարդգեսի Միրզոյանի հայցվորի կողմում հանդես եկող երրորդ անձ ՀՀ Սյունիքի մարզպետարանի 102400 ՀՀ դրամի բռնագանձման պահանջի մասին, հայցվորի կողմից հայցից հրաժարվելու կապակցությամբ:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանին՝ մեկամսյա ժամկետում:

Դատավոր Ի. Բեգլարյան